

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» մարտի 2011թ.

N.666-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՌԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1-05/03-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11' հոդվածը և
Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N1005-Ն
որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական
ծառայության պետի 2006 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության հարկային
ռեզիդենտի կարգավիճակի հաստատման կարգը հաստատելու մասին» N1-05/03-Ն հրամանով
հաստատված Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի
հաստատման կարգում (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) կարգի 1-ին կետում և հավելված 2-ով հաստատված տեղեկանքում «հարկային
պետական ծառայություն» բառերը դրանց հոլովաձևերով փոխարինել «պետական
եկամուտների կոմիտե» բառերով և դրանց հոլովաձևերով,

2) կարգի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դիմողը Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման նպատակով սույն հրամանի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնում է իր հաշվառման վայրի, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության (հաշվառման) վայրի հարկային տեսչություն: Վերջինս, սույն հրամանի Հավելված 3-ով սահմանված գրանցամատյանում կատարում է համապատասխան նշումներ և երկու աշխատանքային օրվա ընթացքում կամ տրամադրում է տեղեկանքը՝ հաստատելով այն հարկային տեսչության կնիքով և ամրագրելով հարկային տեսչության պետի ստորագրությամբ, կամ գրավոր մերժումը՝ նշելով մերժման հիմքերը:» :

3) կարգի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տեղեկանքը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) *Իրավաբանական անձանց դեպքում.*

ա) օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Նման փաստաթղթերի շարքին են դասվում՝

-պայմանագիրը,

-շահաբաժինների վճարման մասին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը,

-հիմնադիր փաստաթղթերը (օրատերկրյա պետությունում առանձնացված ստորաբաժանման բացման համար ուղղված միջոցները հարկերից ազատելու նպատակով) և այլն:

Նշված փաստաթղթերի պատճենները հաստատում են կազմակերպության կնիքով և ամրագրվում կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ:

2) *Հայաստանյան և օտարերկրյա ֆիզիկական անձանց դեպքում.*

ա) օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Նման փաստաթղթերի շարքին են դասվում՝

-պայմանագիրը,

-շահաբաժինների վճարման մասին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը և այլն:

բ) քաղաքացու անձնագրի բոլոր էջերի պատճենները:

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում անձի գտնվելու ժամանակահատվածի հաշվարկման աղյուսակը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում նրա կենսական շահերի կենտրոնի գտնվելու մասին ազատ ոճով շարադրած հիմնավորումը՝ հաստատող փաստաթղթերի պատճենների հետ հանդերձ:

Որպես հաստատող փաստաթղթեր կարող են ծառայել՝

-տեղեկանքը բնակության վայրից,

-տեղեկանքը աշխատանքի վայրից,


-ավիատոմսերը,

-սեփականության վկայականը, և այլն:

Մեկ տարուց ավելի գործողության ժամկետ ունեցող փաստաթղթերի պատճենները նախկինում ներկայացված լինելու դեպքում դրանք կրկնակի ներկայացում չի պահանջվում: Այդ դեպքում դիմումի մեջ պետք է կատարել հղում այն գրության վրա, որով նախկինում ներկայացվել է տվյալ փաստաթուղթը:»:

2. Հրամանը լրացնել նոր <<Հավելված 3.>> -ով (կցվում է):

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների
կոմիտեի նախագահ**



Գ. Խաչատրյան

Հավելված 3.

« Կառավարության առընթեր
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
23» Նոյեմբեր 2011թ. N 666Ն հրամանի

« ԴԵՐԻՆՏԻՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

N	Փաստաթղթերի ներկայացման ամսաթիվը	Կազմակերպության, անհատ ձեռնարկատերի անվանումը, (ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը), կազմակերպա-իրավական ձևը	Կազմակերպության, անհատ ձեռնարկատերի գործունեության հասցեն (ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության հասցեն կամ հաշվառման վայրը)	ՀՎՀՀ (առկայության դեպքում)	Տեղեկանքի ներկայացման երկիրը	« Դեզինֆորմացիոն հանդիսանալու տարին (ներ)	Տեղեկանքի ստացման ամսաթիվը և դիմողի ստորագրությունը
1							